



Ս Փ Յ ՈՒ Ռ Ք ՈՒ Մ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎ ՍՈՖԻԱՅԻ ՄԵՋ

Կիրակի, 4 հունվար 1953, Սոֆիայի եկեղեցիին մեջ գումարվեցավ ընդհանուր ժողով, նախաձեռնությամբ եկեղեցական վարչության: Եկեղեցին լեցուն էր հետաքրքիրներու բազմությամբ:

Վարչության ատենապետ նվարդ Հովանովիկ ժողովը բանալով, առաջարկեց դիվանը, որուն մասնակցեցան՝ Տ. Վահան քահանա Փափազյան, Լ. Համբարձումյան, Ս. Հովհաննեսյան, Հ. Էմիրյան և Օ. Մսերլյան: Դիվանի նախագահ Լ. Համբարձումյան խոսքը տվավ Ե. Հովանովիկին, որ խնամված է իրական փաստերու վրա հիմնված զեկույցով մը պարզաբանեց եկեղեցիի դերը և անոր վերին մարմիններու անցած ճամբան: Ան ընդգծեց Հայ եկեղեցվո Գերագույն Պետին նախաձեռնությամբ հայ ժողովուրդին ցուցաբերած հայրենասիրությունը, որ Հայրենական Մեծ պատերազմին ա՛յլ ավելի շեշտվեցավ, հասարակաց թշնամիին դեմ մղված ահեղ գոտեմարտին տալով «Սասունցի Դավիթ» հրասայլային շարասյունը: Եվ անդրադառնալով եկեղեցական ընթացիկ գործերուն, զեկուցաբերը թվեց եկեղեցիի դերը մասնավորապես խաղաղության պայ-

քարի այս օրերուն, երբ ամեն հնարավորություն կտրվի երկրի իշխանության կողմն ազատորեն գումարելու սույն ժողովը և զբաղելու հասարակությունը շահագրգռող հարցերով:

Եկեղեցական վարչության նյութական հաշվետվությունը ըրավ Տ. Տյուշերյան, պարզելով եկեղեցիի մուտքի և հլքի վիճակը:

Երկու զեկույցներուն շուրջ եղան տեղին հարցումներ և առաջարկներ: Եվ շոշափված հարցերեն կարևորագույններն էին ի միջի այլոց՝ գերեզմանատան մեջ մատուան վերականգնումը, հոգևոր ժողովի անհրաժեշտությունը՝ զբաղելու համար ընթացիկ հարցերով, Մաքսուտ Թիրյաքյանի երաժշտական դործունեության 60-ամյա հոբելյանը, եկեղեցիի պայծառությունը և այլ հարցեր, որոնց իրականացման համար վարչության ատենապետը տվավ անհրաժեշտ պատասխաններ և լրացումներ, փարատելով այն մոլթ մտքերը, որոնք ժողովուրդին մեջ բույն դրեր էին եկեղեցական հարցերու վերաբերմամբ:

(Սոֆիա, «ԵՐԵՎԱՆ», 9 հունվարի 1953 թ.)

ՓԱՐԻՋԻ ՀԱՅՍՍՏԱՆՅԱՅՑ ԵԿԵՂԵՑՈՒ ԿՐՈՆԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԱՐՁԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ՆԱՄԱԿԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ՝ ՆՈՐԻՆ Ս. ՕՏՈՒԹՅԱՆ ԴՊՐՈՑԱՄԵՐ ՏԻԿՆԱՆՑ ՄԻՈՒԹՅԱՆ 75-ԱՄՅԱ ՀՈՐԵԼՅԱՆԻ ԱՌԹԻՎ ՈՒՂԱՐԿԱԾ ԿՈՆԴԱԿԻ ՍՏԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Վեհափա՛ն Տե՛ր.

18 ապրիլ 1953-ին, շաբաթ օր, Արևմտյան Եվրոպայի Հայրապետական պատվիրակ և Փարիզի առաջնորդ գերաշնորհ Սեբովի ծայրագույն վարդապետ Մանուկյան, վարչության ներկայացուցիչներու ընկերակցությամբ, Դպրոցասեր տիկնանց վարժարանը երթալով, այդ ընկերակցության ղեկավարներուն, ուսուցիչներուն, պաշտոնեություն և աշակերտներու ներկայության կարգաց Ձերդ Վեհափառության սրբատառ կոնդակը, որ

լրկված էր այդ ընկերակցության 75-ամյա գործունեության առիթով:

Կոնդակին ընթերցումը ունկնդրվեցավ ուրիշ վրա, հարգանքի և ակնածանքի խորունկ զգացումով:

Դպրոցասերին կողմն խոսք առավ ընկերակցության ընդհանուր քարտուղարուհի տիկին Ա. Բոլաշյան, ինչպես նաև ներկաներեն ոմանք: Փակման խոսքն ըրավ Սեբովի հայր սուրբը:

Բոլորն ալ անխտիր իրենց որդիական սի-

րո և երախտագիտության զգացումներն արտահայտեցին Ձերդ Ս. Օծովյան, ցույց տրված հայրական հոգածության համար:

Վեհափառ Տեր, Ձերդ Ս. Օծովյան գուրգուրոտ հետաքրքրությունն ու հոգածությունը հավատացյալ ժողովուրդին և անոր մշակովային ու բարենպաստակ ձեռնարկներուն հանդեպ օրհնաբեր ցոյցի մը պես կթափանցե բոլորին հոգիներեն ներս, կբերե բոլորին սփոփանք, կորով և ոգևորություն: Կխնդրենք,

որ բարեհաճիք միշտ անպակաս ընել զանոնք:

Մատչելով ի համբույր Հայրապետական Սուրբ Աջույդ, մնամք որդիական խորին հարգանքք,

Փարիզի Հայաստանյայց եկեղեցվո
Կրոնական ընկերակցության
վարչական ժողովո ատենապետ՝
Ս. ՔԱՐՅԱՆ

Փարիզ, 22 ապրիլ 1953

**ԴՊՐՈՑԱՍԵՐ ՏԻԿՆԱՆՑ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒՀԻ
ՏԻԿԻՆ Ա. ԲՈՅԱԶՅԱՆԻ ՈՒՂԵՐԶԸ՝ ԴՊՐՈՑԱՍԵՐ ՏԻԿՆԱՆՑ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ
75-ԱՄՅԱ ՇՈՒԵԼՅԱՆԻ ԱՌԹԻՒ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ
ՈՒՂԱՐԿԱԾ ԿՈՆԴԱԿԻ ԸՆԹԵՐՑՄԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ**

Գերաշնորհ հա՛յր սուրբ և սիրելի՛
հանդիսականներ.

Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոսը, որուն իմաստուն, հեռատես և հայրական հոգածության բարիքները կտեսնենք ու կվայելենք շարունակական կերպով, այս անգամ բարեհաճած է մասնավոր կոնդակով մը իր համակրանքն ու զննահատականը հայտնել Դպրոցասեր տիկնանց ընկերության հանդեպ, որուն երեք քառորդ դարու գործունեության մեջ կտիրապետե լուսավոր գիծ մը — ծառայել մեր դարավոր, սակայն մշտա-նորոգ, փոքրթիվ, բայց տաղանդավոր, բազմաշառչար, այլ արի ժողովուրդին:

Մեր հիմնարկությունը նախնյութած է մարզ մը — ուսում, դաստիարակություն և կրթություն — ուր ամենն ալելի կարողացու-լան հայ ժողովուրդին ձիրքերը, արժանիք-ներն ու մեծությունը:

Հավակնությունը չունինք ըսելու, թե ան-թերի եղած է մեր դործը. կատարելությունը Աստուծո հատուկ ստորոգելի մըն է: Սակայն համեստության դեմ մեղանշում մը չըլլար, եթե ըսենք, որ մեր կարելի բոլոր միջոցնե-րով միշտ ձգտած ենք հավատարիմ մնալ մեր կոչումին և ջանադիր եղած ենք կյանքի մեջ իրականացնել մեր նպատակները, որ-քան որ պարագաներն ու պայմանները հա-րավորություն տված են մեզի:

Հանրային գործունեության մը դժվարու-թյունները ոչ ոքի ուշադրութենեն կրնան վրիպիլ: Այդ դժվարությունները, սակայն, կրանան անհունորեն ճնշող ու ջլատիչ, երբ արտասովոր աղետներ և արտակարգ պայ-մաններ զնդակ և ցավատանջ կացություն-ներ կստեղծեն:

Նրա հետադարձ ակնարկ մը կնետենք մեզ վերջին երեք քառորդ դարու անցյալին վրա, ինչպիսի՝ սրտամորմոք դեպքեր և ողբերգու-թյուններ կցցվին մեր հիշողության առջև: Քանի՛ քանի՛ անգամներ Դպրոցասերին քայ-լերուն առջև բացվեցան վճատության ան-հատակ անդունդներ: Հակառակ այդ բոլո-րին, ան տեհց ու շարունակեց իր գործը, աննահանջորեն քալելով զոհողության և անձնվիրության անընկճելի ոգիով:

Այսօր, երբ այդ բոլորին վարձատրությու-նը չեքմիկ ճառագայթի մը նման կթափան-ցե մեր հոգիներեն ներս և հրճվանքով կլեց-նե զանոնք, մտածումս կերթա բոլոր անոնց, որոնք ամենն ալելի արժանի էին ատոր և որոնք անվերադարձ կերպով հրաժեշտ առած են ունայն աշխարհի մը, զոր կարելի է բանի մը վերածել միմիայն բարի և ազնիվ գործե-րով:

Այդ վարձատրության լուսապսակը մեր ծերունադարդ Վեհափառ Կաթողիկոսին սրբա-տառ կոնդակն է, զոր մեզի կարդաց Հայրա-պետական պատվիրակ և Փարիզի առաջնորդ գերաշնորհ Սերովբե ծայրագույն վարդապետ Մանուկյան:

Այսօր ինձի վիճակված է թարգմանը հան-դիսանալու Դպրոցասերի անցյալ և ներկա ղեկավարներուն, անդամներուն, ուսուցչա-կան կազմին, ուսանողության և հազարա-վոր համակիրներու զգացումներուն, խնդրե-լով Ձեզմե, սիրելի՛ հայր սուրբ, որ բարե-հաճիք ընդունիլ և ներկայացնել նաև Ամե-նայն Հայոց պատկառելի Հայրապետին մեր ամենախորունկ հարգանքի, մեծարանքի և երախտագիտության զգացումները:

Ռեճսի, 18 ապրիլ 1953,

Դպրոցասեր տիկեանց վարժարան:

